Ազգ
Azg
7 ՄԱՐՏ 2007 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 42 (3694)

# Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւ ԱՄՆ Սենատում

Երեկ, ինչպես CNN-Turk-ն է տեղեկացրել, ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության էր դրվելու «Ակօսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող բանաձեւը, որտեղ թուրքական իշխանություններին կոչ էր արվում նաեւ չեղյալ հայտարարել քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածն ու դիվանագիտական եւ առեւտրական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ:

Թուրքական հանրային հեռուստատեսությունը, անդրադառնալով բանաձեւին, դա որակել է «Թուրքիային դատապարտելու ԱՄՆ-ի պատրաստակամության» դրսեւորում: Բանաձեւի հեղինակը դեմոկրատ սենատոր Ջո Բայդենն է, որը միաժամանակ զբաղեցնում է Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Հրանտ Դինքի սպանությունը դատապարտող այս բանաձեւի մեկ այլ օրինակ ներկայացվել է նաեւ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում:

Հ. Չ.

# «Թուրքիան պատժում է ԱՄՆ-ին»

## Վաշինգտոնում հայտարարել է ՀՀ արտգործնախարար Օսկանյանը

Երեկ թուրքական հանրային հեռուստատեսությունը կայքէջում այս վերնագրով նշել է. «Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը առաջ քաշեց այն տեսակետը, թե Թուրքիան ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատին ներկայացված Հայոց ցեղասպանության բանաձեւի առնչությամբ որոշել է պատժել Մ. Նահանգներին»:

– Վաշինգտոնում գտնվող Վարդան Օսկանյանը, ըստ նույն աղբյուրի, ասել է, որ թեեւ Հայաստանը դեմ է նման կարգի խնդիրների կառավարությունների միջամտությանը, սակայն, երբ Թուրքիան կառավարության մակարդակով ձեռնամուխ եղավ լոբբիստական գործունեություն ծավալել բանաձեւի դեմ, ստիպված մենք էլ սկսեցինք այդ հարցով զբաղվել: Օսկանյանը միաժամանակ նշել է, որ քրեական օրենսգրքի միջոցով երկրի ներսում ցեղասպանության մասին արտահայտվողներին լռեցնող Թուրքիան հիմա էլ ձեռնարկել է պատժել ԱՄՆ-ին, եթե Կոնգրեսը հանդգնի խոսել ցեղասպանությունից:



CNN-Turk-ի տվյալներով ՀՀ արտգործնախարար Օսկանյանը նշել է, որ Վաշինգտոնում ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հետ հանդիպմանը քննարկվել է ցեղասպանության բանաձեւի հարցը: Աղբյուրը այլ մանրամասներ չի նշել:

Հ. Չ.

ԼՈԶԱՆ

# Շարունակվում է Փերինչեքի դատավարությունը

## Շվեյցարական դատարանը որոշել է նիստերն ավարտել մարտի 9-ին

Ինչպես տեղեկացրել էինք նախորդ համարում, երեկ Շվեյցարիայի Լոզան քաղաքում սկսվել է Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքի դատավարությունը: Երբեմնի մաոիստ Փերինչեքը, որը թուրքական մամուլի վկայությամբ սերտորեն համագործակցում է թուրք ազգայնամոլների եւ գաղտնի ծառայությունների հետ, մեղադրվում է Հայոց ցեղասպանությունը ժխտելու մեջ:

Հիշեցնենք, որ 2005 թ. հուլիսին Փերինչեքը Շվեյցարիայում «Հայոց ցեղասպանությունը կայսերապաշտական սուտ է» կարգախոսով ցույց էր կազմակերպել եւ ապահովել միջոցառմանը Թուրքիայից «Լոզանի գրոհայիններ» կազմակերպության 200 անդամների մասնակցությունը: Ցույցին հետեւել էր «Լոզան-2005» կոնֆերանսի կազմակերպումը:

Լոզանի դատախազությունը, «Թալեաթ փաշա» կազմակերպության հաղորդագրության համաձայն, թեեւ հրաժարվել էր Փերինչեքի դեմ գործ հարուցելուց, այնուհետեւ տեղի է տվել «ԱՄՆ-ի վերահսկողության տակ գտնվող ՆԱՏՕ-ի ծնունդներին»: Դատավարության ընթացքում Փերինչեքին աջակցելու համար մարտի 5-ին Անկարայից ինքնաթիռով լրագրողների հետ Ժնեւ է ուղեւորվել «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» առաջին նախագահ Ռաուֆ Դենքթաշի գլխավորած 160 հոգանոց պատվիրակությունը: Դրա կազմում, «Հուրիեթի» վկայությամբ, ընդգրկված են համալսարանների ռեկտորներ, պաշտոնաթող գեներալներ, քաղաքական գործիչներ, ինչպես նաեւ Ստամբուլի եւ Իզմիրի փաստաբանների միության անդամներ:

Ըստ «Միլլիեթի», շվեյցարական ոստիկանությունը արգելել է թուրք լրագրողների եւ «Թալեաթ փաշա» կոմիտեի անդամների մուտքը դատարան, փոխարենը թույլ տալով Շվեյցարիայում հավատարմագրված օտարերկրյա լրագրողներին, ինչպես նաեւ մի խումբ հայերին ներկա գտնվել նիստին: Ավելին, ոստիկանությունը Բանվորական կուսակցության ներկայացուցիչների համառ պահանջներից հետո միայն համաձայնել է, որ Փերինչեքի դատավարությանը որոշակի ժամանակով ներկա գտնվի ամերիկացի հակահայ պատմաբան Ջասթին Մակքարթին: Ըստ երեւույթին, Դենքթաշը կմասնակցի Փերինչեքի դատավարության այսօրվա նիստին:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# «Ռեալնի Ադրբեջանի» խմբագիրը ճշմարտախոս է եւ քաջ միամիտ

Փախստականների եւ տեղահանվածների օգնության միավորման նախագահ Տատյանա Չալաձեն դիմել է դատարան «Ռեալնի Ադրբեջան» թերթի գլխ. խմբագիր Էյնուլա Ֆատուլաեւի դեմ հայցով, վերջինիս մեղադրելով «Խոջալուի ողբերգական զոհերի հիշատակը վիրավորելու մեջ»: Ինչպես փոխանցում է «Ռեգնում» գործակալությունը, «Կավկասկի ուզել» պարբերականի հաղորդմամբ, գործի քննությունը տեղի կունենա մարտի 15-ին: Տատյանա Չալաձեի խոսքերով, Ֆատուլաեւը տարբեր ինտերնետ-ֆորումներում հայտարարել է, որ Խոջալուի բնակիչների մի մասին սպանել են իրենք՝ ադրբեջանցիները, այլանդակելով սպանվածների դիակները: Թեեւ Ֆատուլաեւը հայտարարել է, թե չի մասնակցել ինտերնետ-ֆորումներին, Չալաձեի պնդմամբ, Ֆատուլաեւը ստում է, ավելին՝ մի քանի տարի առաջ հրապարակված նրա «Ղարաբաղյան օրագրի» բովանդակությամբ Չալաձեն Ֆատուլաեւին անվանել է հայկական հետախուզության ազդեցության գործակալ: Կայքէջերի տեղեկացմամբ, մարտի 3-ին մոտ 100 փախստականներ բողոքի ակցիա են անցկացրել նշված թերթի խմբագրության առջեւ՝ շենքի վրա ձվեր նետելով:

# Իրանը ներողություն է խնդրում

Փետրվարի վերջին ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի քաղաքացիական ուղղաթիռներով Ադրբեջանի օդային սահմանը խախտելու համար Իրանը ներողություն է խնդրել Ադրբեջանից: Այս մասին, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների հայտնել է Ադրբեջանի փոխարտգործնախարար Խալաֆ Խալաֆովը: Նրա տեղեկացմամբ պատահածը նպատակադրության արդյունք չէ եւ Իրան կատարած վերջին այցի ընթացքում, ի պատասխան ադրբեջանական կողմի արտահայտած դժգոհության, իրանական կողմը ափսոսանք է հայտնել պատահական սխալի արդյունք պատահարի համար:

Ն. Պ.

# Վրացի տնօրեններ հայկական եւ ադրբեջանական դպրոցներում

Ախալքալաքի շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների պաշտոններին հավակնող մոտ 100 թեկնածուներից միայն ինն են անցել տեստավորումը, այդ թվում 8-ը վրացի: Դրա հիմնական պատճառը թեստավորման վրացերենով զգալի ծանրաբեռնվածությունն է, որն այլազգիների համար դարձել է խնդրահարույց, եւ դա վերաբերում է ոչ միայն Սամցխե-Ջավախեթիի հայերին, այլեւ Վրաստանի Քվեմո Քարթլիի ադրբեջանական դպրոցներին: Կարելի է փաստել, որ անկախ վրացական կենտրոնական իշխանությունների նպատակների բարիության աստիճանից, հայկական եւ ադրբեջանական դպրոցները վրացի տնօրենների դեպքում, մեծ հավանականությամբ, նաեւ արագությամբ կզրկվեն ազգային որակներից:

# «Վրաստանում վիճահարույց» են ոչ միայն հայկական, այլեւ վրացական եկեղեցիները

Վրաստանում եկեղեցիներ սեփականելը փաստորեն չի վերաբերում միայն օտար կառույցներին: Վրացիներն իրենք իրենց միջեւ եկեղեցապատկանության հարցեր են բարձրացնում: Մասնավորապես Ախալցխայի շրջանում Իվլիտա գյուղի եկեղեցին դարձել է ուղղափառ վրացիների եւ վրաց կաթոլիկների վիճաբանության առարկա: «Ա-Ինֆո» գործակալության տեղեկացմամբ, ուժային մեթոդներով Իվլիտայի գյուղական եկեղեցին կաթոլիկ լինելուց վերածվել է ուղղափառի: Թեեւ կաթոլիկները կազմում են գյուղի բնակչության 70 տոկոսը: Հետաքրքրական է, որ կաթոլիկներին մինչ այդ էլ չի թույլատրվել եկեղեցում ծիսակատարություններ իրականացնել:

# Հայաստանը Անգարսկում ուրանի հարստացման միջազգային կենտրոնի մասնակից

Տնտեսական համագործակցության հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի 9-րդ նիստը տեղի կունենա Երեւանում՝ սեպտեմբերին: «Ռեգնում» գործակալության տեղեկացմամբ, Մոսկվայում օրերս տեղի ունեցած նիստի ընթացքում քննարկվել են ի թիվս այլ հարցերի նաեւ՝ Գյումրիում ռուսաստանյան գլխավոր հյուպատոսություն բացելու, Անգարսկ քաղաքում ուրանի հարստացման միջազգային կենտրոնում Հայաստանի մասնակցությամբ եւ Հայաստանում ուրանի հանքային բազայի զարգացման հարցերը:

Ա. Հ.

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ

# ԱՄՆ-Իրան պատերազմը վերջ կդնի Հայաստանի կոմպլեմենտարությանը

## Հարեւանների միջեւ պատերազմը մեր գլխին պատուհաս կդառնա

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ինչ էլ Թեհրանն այսօր առաջարկի, Միացյալ Նահանգները որոշել է հարվածել եւ բավականին տրամաբանորեն ձգտում է դեպի այդ նպատակը: Պատերազմը գրեթե անխուսափելի է, քանի որ ԱՄՆ-ը մեծ միջոցներ է ներդրել: Եթե գործողություններ սկսվեն, ապա դա թերեւս կլինի այս գարնանը, քանի որ պետք է անցնի իրանական ձմեռը: Երեկ «Փաստարկ» ակումբում նման կանխատեսումներ ներկայացրեց քաղաքագետ **Լեւոն Մելիք-Շահնազարյանը**: Ըստ նրա, Միացյալ Նահանգներում քննարկվում է երեք տարբերակ:

Առաջին տարբերակը կետային հարվածներն են տարբեր կարեւորության ռազմական կետերին, որ մոտ է նրան, ինչ ԱՄՆ-ն արեց Հարավսլավիայում: ԱՄՆ-ում լուրջ քննարկվող երկրորդ տարբերակը բանակով ներխուժելն է Իրանի տարածք, օկուպացնելը՝ փորձելով հասնել իշխանափոխության, այսինքն՝ իրաքյան տարբերակը: Դա մեծ զոհերի հետ է կապված, առաջին հերթին՝ Նահանգների համար, եւ երեւի թե ամենաքիչ հավանականն է:

Երրորդ տարբերակն աֆղանականն է, այսինքն՝ փորձել կռվեցնել Իրանում բնակվող ժողովուրդներին իրար հետ, օգնելով մի կողմին եւ այդ կերպ քիչ արյուն կորցնելով հասնել նպատակին: Տվյալ դեպքում այդ ժողովուրդը Իրանի թուրքալեզու բնակչությունն է, որ ադրբեջանցի չէ հիմնականում, որի թվաքանակը բավականին մեծ է՝ 12-16 մլն: Նրանք բնակվում են բավականին խիտ, սահմանամերձ են Ադրբեջանին եւ վատ տրամադրված Իրանի դեմ: Այս տարբերակն ավելի հավանական է: Թե երեք տարբերակներից որը կկիրառվի, դժվար է ասել, բայց առավել հավանական են կետային հարվածները կամ թուրքալեզու ժողովրդին օգտագործելը:

ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը, Մելիք-Շահնազարյանի խոսքերով, այս ամսի վերջին Վաշինգտոն է կանչել Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովին, որտեղ Միացյալ Նահանգները բնականաբար պետք է պնդի, ձեռք բերի Ադրբեջանի դաշնակցությունը եւ տարածքն օգտագործի որպես հենարան Իրանին հարվածելու համար: Ադրբեջանը դրա դիմաց պահանջելու է փոխհատուցումներ, քանի որ հայտնվում է վտանգի տակ: «Իմ տվյալներով, Իրանը քննարկում է տարբերակ, որ այդ երկրի կողմից Իրանի դեմ հարձակվելու համար տարածք տրամադրելու դեպքում կհարձակվի եւ գրավի Բաքուն, որը ԱՄՆ-ը կխուսափի ռմբակոծելուց նավթի պատճառով: Ադրբեջանն այդ սակարկություններում գուցե ավելի շատ շեշտադրում անի Ղարաբաղի վրա, բայց Միացյալ Նահանգներն աշխատում է փոխհատուցման դեպքում խոսել հյուսիսային Իրանի մասին, քանի որ ԱՄՆ-ը զգուշանում է հայկական լոբբիից», նշեց քաղաքագետը:

Տես էջ 2

